

ՀՈԳԵՎՈՐ

ՎԱՐՂԱՎԱՐ



Հայ Առաքելական եկեղեցին հուլիսի 11-ին նշեց Վարդավառի Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Ռոստոմի մարզի բոլոր հայկական եկեղեցիներում նույնպես տոնվեց Վարդավառը:

Դեռի Ռոստոմի Մուրթ Խաչ եկեղեցում քահանա Տեր Պողոս Տերտրյանը մատուցեց Պատարագ, այնուհետև կատարեց աղյուրի օրհնության կարգ: Վարդավառի տոնը շարունակվեց եկեղեցու բակում երեխաների, երիտասարդների, մեծահասակների ջրոցի խաղով, գեղեցիկ համերգով, ելույթ ունեցան Ռոստոմի մարզի հայկական պարային համույթները, երգիչներգչուհիներ, ստեղծագործող խմբեր:

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից երրորդն է: Այն շարժական տոն է և նշվում է Մուրթ Չատիկից 98 օր հետո՝ հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-և ընկած ժամանակահատվածում:



Հայ Առաքելական սուրբ եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի պաշտոնական կայքը տոնի առիթով նշում է. «Մեր Տեր Հիսուս Քրիստոս, համաձայն Ավետարանի, Ս. Պետրոս, Ս. Հակոբոս և Ս. Հովհաննես առաքյալների հետ բարձրանում է Թաբոթ լեռն աղոթելու: Աղոթքի պահին Հիսուս նրանց առաջ պայծառակերպվում է. «Դեմքը փայլեց, ինչպես արեգակը, և Նրա զգեստները դարձան սպիտակ՝ ինչպես լույսը» (Մատթեոս 17:2, Մարկոս 9:2, Դուկաս 9:29): Աշակերտների ապշած աչքերի առջև Քրիստոս խոսում է շուրջ հազար տարի առաջ վախճանված Մովսեսի և հրեղեն կառքով երկինք համբարձված Ս. Եղիա մարգարեի հետ: Ս. Դուկաս ավետարանիչը պատմում է, որ նրանք խոսում էին Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի դեպքերի մասին, որ պիտի տեղի ունենային Երուսաղեմում (Դուկաս 9:31): Սքանչելի տեսարանից զմայլված Ս. Պետրոս առաքյալը բացականչում է. «Վարդապետ, լավ է, որ մենք այստեղ մնանք. երեք տաղավարներ շինենք, մեկը՝ Քեզ, մեկը՝ Մովսեսի և մյուսը՝ Եղիայի համար»: Մինչ Նա խոսում էր, լուսափայլ մի ամպ հովանի է դառնում նրանց, և ամպից եկող ձայնն ազդարարում է. «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, Դրան լսեցեք»: Հանգստացնելով ու ոտքի կանգնեցնելով գետնամած առաքյալներին՝ Հիսուս նրանց պատվիրում է ոչ որի չհայտնել տեսածի ու լսածի մասին՝ մինչև Աստծո Որդու փառավորվելը:



Ս. Հովհան Ոսկերբանը երեք բացատրություն է տալիս, թե ինչու Տիրոջը հայտնվեցին Ս. Մովսես և Ս. Եղիա մարգարեները. երկուսն էլ ունեցել են Աստծո տեսիլքը՝ Մովսեսը՝ Սինա (Ելք 24.12-18), իսկ Եղիան՝ Քորեբ լեռան վրա (Գ Թագավորներ 19:8-18): Նրանք խորհրդաբար ներկայացնում էին կյանքը և մահը: Մովսեսը մահացավ այդպես էլ չտեսնելով խոստացված երկիրը, իսկ Եղիան կեղանի կերպով երկինք վերացավ հրեղեն կառքով:

Հիսուսի պայծառակերպության ժամանակ Մովսեսի՝ նախանձառույզ օրենսդրի ու Եղիայի՝ երկինք տեղափոխված նախանձախնդիր օրինապահի հայտնվելը խորհրդանշում է, որ Քրիստոս է Օրենսդիրը և չի դրժում Աստծո Ուխտը: Նա է Տերը երկրի և երկնքի, ողջերի ու մեռյալների, քանզի Մովսեսին մեղայների միջից վեր հանեց, իսկ Եղիային՝ ողջերի: Այս տոնը հայտնի է նաև Վարդավառ անունով: Տոնի ժամանակ ժողովրդական

սովորույթներից է միայնակ վրա ջուր ցողնել ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը, Նոյի աղավնուն: Սովորություն է նաև ծաղիկներով զարդարվելը, ինչն Աստվածորդու փառքի երևման առթիվ մեծ ուրախության արտահայտություն է:

«Վարդավառ» ժողովրդական անվանումը, հավանաբար, գալիս է վարդաջուր լցնելու սովորությունից:

Ս. Գրիգոր Տաթևացին տոնի «Վարդավառ» անունը բացատրում է Հիսուսին վարդի հետ համեմատելով, ինչպես վարդը մինչև բացվելը թաքնված է իր պատյանի մեջ և բացվելով՝ երևում է բոլորին, այնպես էլ Հիսուս մինչև այլակերպությունն էր մեջ կրում էր աստվածային էությունը և պայծառակերպվելով՝ հայտնեց իր Աստվածությունը:

Վարդավառի տոնին նախորդում է շաբաթապահը: Իսկ հաջորդ օրն, ինչպես տաղավար բոլոր տոներից հետո, Մեռելոց է. բոլոր եկեղեցիներում ննջեցյալների հոգիների համար մատուցվում է Ս. Պատարագ և կատարվում հոգեհանգիստ:

Պայծառակերպության տոնով հաստատվեց այն ճշմարտությունը, որ Հիսուս Աստծո Որդին է: Աստծո պատգամն է առաքյալներին և ողջ աշխարհին. «Նրան լսեցեք»:

ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ՝ ԱՐՎԱԾ Է



«ԱՐԵՎԻԿԻ» ԵՐԵՒԱՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻՆ

Երևան: 5-ը հուլիսի: Հաղթանակ զբոսայգու գլխավոր մուտքի մոտ վաղ առավոտից ժամանում են «Քայլ դեպի տուն» ծրագրի պատանի մասնակիցները՝ հարազատների ուղեկցությամբ: Մա երկրորդ հերթափոխն է, ուր շուրջ 90 պատանի ու աղջիկ հայրենիքում կանցկացնեն 14 հետաքրքիր ու բովանդակալից օր: Քիչ անց, ավելի ճիշտ նշված ժամին՝ հավաքատեղի են ժամանում շքեղ միկրոավտոբուսներ, խմբերին մոտենում են կազմակերպիչ-չոկատավարները: Գարձ զրույցից հետո հստակ է դառնում ծրագրի առաջին օրվա օրակարգը. մեկնում Ծաղ-

կաձոր, տեղավորվել կեցության վայրում, գրանցվել, դասընթացի ծանոթացում, ճաշ, թիմային հանդիպում, ընթրիք, մշակութային միջոցառում, հանգիստ, քուն:

Մինչ տարրեր երկրներից ժամանած հայորդիները խաժակն ու սևակն, ուրախ ու անհամբեր տեղավորվում են ավտոբուսներում, մենք մոտենում ենք ջոկատավարներից մեկին Արման Մինասյանին:

Արմանի խմբում են Ռոստոմից ժամանած «Արնիկ» հայոց լեզվի խմբակի երկու պատանիներ Դավիթն ու Աբրահամը:



Նրանք ազատ հաղորդակցվում են հայերեն ու շատ ոգևորված են հայրենիքում գտնվելու այս աննախադեպ փաստով:

— Շատ ուսանելի և բազմաբովանդակ օրեր են սպասվում մեր երեխաներին, — ասում է Արման Մինասյանը, — նրանց յուրաքանչյուր օրը հագեցված է լինելու հայոց լեզվի դասընթացով, պատմա-ձանաչողական դասընթացով, երգ ու պարի ուսուցմամբ: Եվ վերջապես նրանց ամենօրյա ծրագրում կա առնվազն մեկ այցելություն Հայաստան պատմամշակութային և այլ տեսարժան վայրեր:

Այցելություններ են նախատեսված Մատենադարան, Օշական, Մեսրոպ Մաշտոցի եկեղեցի, Ծիծեռնակաբերդ, ՀԲԸՄ վիրտուալ համալսարան, «ԹՈՒՄՈ» տեխ-

նոլոգիաների կենտրոն, Գարնի, Գեղարդ, Էջմիածին, Զվարթնոց, Դեղ Թումանյանի ծննդավայր, Ետարուր և շատ այլ միջոցառումներ, որոնք ունեն մեկ նպատակ՝ սփյուռքի երիտասարդներին կապել հայրենիքին, ծանոթացնել իրենց բազմաթիվ հասակակիցների հետ. սեր ու վստահություն ներարկել այն ամենի հանդեպ ինչը կոչվում է հայ ու Հայաստան:

Վերջում նրանք կմասնակցեն հրաժեշտի խարույկին և կմեկնեն իրենց երկրները տանելով իրենց համար նոր հայտնաբերած հրաշքը՝ Հայրենիքը:

ՔԱՅԼԸ ԴԵՊԻ ՏՈՒՆ՝ ԱՐՎԱԾ Է:
Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
լրագրող

